

Գեօղտուկ կրեշիկ, կըտիսնի մարդ չկայ, յըմեն գեացած է, կընը մէկ ժամու շապիկ արընը մէջ կթաթխի, կը վաղի դախ¹ Սասուն. կըգեայ, կըխասնի Սասունայ մէջ, կգեայ Դաւթը մօտ: Վուր կգեայ Դաւթը մօտ, կը տիննայ Դաւիթ սկօն է խմեր, սկի խելք չկայ գըլեօն:

132. Տիրացուն կգեայ, դիմաց կը կանգնի, կըսի.

— Դաւիթ, էկան քառսուն տէրտէր սպանին, քեառսընից մէկ պակաս սարկաւագ սպանին, վանք թալնին, աւըն գնացըն:

Դաւիթ էոաց. — Խրեօխպէր, սարկաւագ իկիր է. մակեար² խոնկն է պակաս, ձէթն է պակաս, մոմն է պակաս. տո՛ւ թըղ էրթայ:

133. Սարկաւագ կը մնայ շուար, չկէրի խասկացցի Դաւթըն: ճար կը կարուի վերայ:

Ձէնա ժամու շապիկ էրընաթաթախ կը զարկի յառէջ:

Վուր Դաւիթ գշապիկն կը տիննայ էրուն. էնու քէֆ կը թուղին: — Սարկաւագ, կըսի, էդ լնչ բան ըլլեր է:

Սարկաւագ կըսի. — Քեառսուն տէրտէր սպանին, քեառսընից մէկ պակաս սարկաւագ սպանին. ժամօուն թալնին, թուղին գնացըն:

— Սարկաւագ, շիւտ է գնացած:

— Ինունը ժամ թալնին դեն գինացըն, իսն էլ դէսն իմ իկի:

134. Դաւիթ կանգնաւ, գնաց մէկ բառտի ծառ քեշից, դրեց յիւր թիվի վերայ, շիւտ—վաղելեօվ գնաց:

Կուզ Բատին գտեր ինչ բան էր Դաւիթ. էն յառէջ կերթէր, վուր Դաւիթ չը խասնէր էնու:

Դաւիթն է, վաղիլեօվ գնաց, խտաւ էնու զօշումին³:

135. Դաւիթ մէկ դիր գիրան աջու թլից, մէկ գիր ձախու թլից, էնու զօշուն յըմեն ջարդից. նանց սպանից, մնացողք ւցից գիտի մէջ. էն էլ գիտ խեղդից:

Ըրշիկց, մարդ չմնաց էլ, աջ թիւին ըրշիկց աըսաւ Կուզ Բատին ձիով իր, գիտ ընցիր էր էն թայր⁴:

Էոաց. — Ձիու տէր, իս կէրիմ, գեամ, քի սպանիմ. համա քի չըմ սպանի, դիւ դնմ, խապար տար քիւ թագաւուրըն. մէկ էլ սկնայ քեաք շուտի, սկնայ բան էնի. աւիր բանից լնչ կը դառնայ:

1. Թրք.—Մինչևէ: 2 Թրք.—Մի՞թէ: 3 Թրք.—Չօրր: 4 Թրք.—Կողմ, հաւասար մաս, հասակ: